ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Արևաշող, 0255-2-21-76 arevashogh.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 Սեպտեմբերի 2020 թվականի N 27

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15 - Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական Ինքնակառավարման մասին» օրենքի 14 - րդ հոդվածով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Արևաշող համայնքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 15 - ի նիստի օրակարգը

Օրակարգ

Արևաշող համայնքի ավագանու 2020 թվականի Սեպտեմբերի 15 - ի նիստի

1. Սամվել Սայադի Դունամալյանին «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին:
2. Արևաշող համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդ վաճառքով օտարելու մասին:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ԱՐԱՄ

ԱՂԱԲԵԿՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱՓԻՅԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱՄԲԱՐՅԱՆ ԱԼՎԱՐԴ

ՀԱՄԲԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Արևաշող, 0255-2-21-76 arevashogh.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 28-Ա

### ՍԱՄՎԵԼ ՍԱՅԱԴԻ ԴՈՒՆԱՄԱԼՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական Ինքնակառավարման մասին» օրենքի 18 - րդ հոդվածի 1 ին մասի 26 - րդ կետով և Համայնքի ավագանու 2016թ - ի սեպտեմբերի 19 - ի թիվ 34 - Ն որոշմամբ հաստատված կարգով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Ռուսաստանի դաշնության քաղաքացի՝ ծագումով Արևաշողցի Սամվել Սայադի Դունամալյանին շնորհել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշողի համայնքի պատվավոր քաղաքացի» կոչում:
2. Համայնքի ղեկավարին Ռուսաստանի դաշնության քաղաքացի՝ ծագումով Արևաշողցի Սամվել Սայադի Դունամալյանին հանձնել սույն որոշման կրկնօրինակը և «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշողի համայնքի պատվավոր քաղաքացի» կոչման վկայականը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ԱՐԱՄ

ԱՂԱԲԵԿՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱՓԻՑԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱՄԲԱՐՅԱՆ ԱԼՎԱՐԴ

ՀԱՄԲԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ


Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Արևաշող, 0255-2-21-76 arevashogh.lori@mta.gov.am


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 29

## ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 - րդ հոդվածի 1 - ին մասի 21 - րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67 - րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ - ի ապրիլի 12 - ի թիվ 286-Ն որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը Արևաշող համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը Արևաշող համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից ներքոհիշյալ հողամասը աճուրդ վաճառքով օտարելուն
   1) լոտ 1 ծածկագիր 06-021-0043-0018, 0.007471 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության, /վկ.15052020-06-0038/ մեկնարկային գինը սահմանել 51000 /հիսունմեկ հազար/ ՀՀ դրամ (1 քմ 682 ՀՀ դրամ),
   2) լոտ 2 ծածկագիր 06-021-0044-0036 0.03329 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության /վկ. 07092020-06-0056 /մեկնարկային գինը սահմանել ՀՀ դրամ 86580 /ութսունվեց հազար հինգ հարյուր ութսուն/ ՀՀ դրամ (1 քմ 260 ՀՀ դրամ),
2. Համայնքի ղեկավարին մրցույթով աճուրդ-վաճառքի անցկացումից մեկ ամիս առաջ մամուլով և զանգվածային լրատվության այլ միջոցներով հրապարակել սակարկությունների անցկացման տեղը, օրը, ժամը, հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, մեկնարկային գինը, օգտագործման նպատակը, չափերը, ճանապարհների, ջրատարի, կոյուղու, էլեկտրահաղորդման գծերի, գազատարի առկայության մասին տվյալները, ինչպես նաև տվյալ հողամասի նկատմամբ սահմանափակումները (ներառյալ՝ սերվիտուտները):

3. Սահմանել՝ աճուրդի և մրցույթի մասնակցության վճար 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ, (աճուրդային մրցույթի մեկ քայլի չափը՝ լոտի մեկնարկային գնի 5%-ի չափով, նախավճարի չափը սահմանել՝ լոտի մեկնարկային գնի 5%-ի չափով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ԱՐԱՄ

ԱՂԱԲԵԿՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱՓԻՑԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱՄԲԱՐՅԱՆ ԱԼՎԱՐԴ

ՀԱՄԲԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ**